

# ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐԸՆՏԻՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

*«Օրհնեալ մեր Տէր Յիսուս Քրիստոս. ամէն. Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի, զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց, և մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն, զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն»:*

*«Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ, ամէն»:*

*Հարգելի տիար ատենապետ, հարգելի դեպուտատներ՝ երեսփոխաններ, ես գալիս եմ Ս. Էջմիածնից ամենայն հայոց՝ բերելու իմ ողջույնը և օրհնությունը Գերագույն խորհրդի այս նորակազմ, բախտորոշ պատմական նստաշրջանին:*

*Ինչպես գիտեք, ես իմ տկար ուժերով 130-րդ Հայոց Կաթողիկոսն եմ, և այս պահին իմ միտքը գնում է դեպի ետ, վերջին 1700 տարիների ընթացքի ծանապարհին՝ գործած, ապրած, շատ անգամ տառապած, երբեմն նույնիսկ նահատակված Կաթողիկոսների հիշատակին: Եվ զգում եմ այս պահին, կանգնած է ձեր առաջ ոչ թե պարզապես Վազգեն Կաթողիկոսը, այլ մեր ողջ պատմության 130 Կաթողիկոսները, որոնց պատգամաբերը լինելու ես բախտավորությունը և պատիվը ունեմ: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին հայ ժողովրդի ազգային Եկեղեցին է 1700 տարիներից ի վեր, միակ ազգային Եկեղեցին: Հայաստանյայց Եկեղեցու պատմությունը, փոթորկալից պատմությունը այս 1700 տարիների ընթացքում համարյա թե համընկնում է հայ ժողովրդի պատմության ծանապարհի հետ: Եվ, հետևաբար, կարծում եմ, որ պատահական երևույթ չէ, և նշանակալից երևույթ է, որ այսօր, երբ մեր ժողովուրդը, երբ մեր հայրենիքը գտնվում է նոր ծանապարհներ որոնելու ծակատագրա-*

կան կացության մեջ, ներկա է այստեղ նաև Հայոց Հայրապետը: Ես ողջունում եմ ձեզ հայրական սիրով. կարծում եմ հայրական բառը կարող եմ օգտագործել թե՛ իբրև Հայրապետ, և թե՛ իբրև ութսուներկու տարեկան հայ ժողովրդի զավակ: Ողջունում եմ ձեզ սիրով, գնահատանքով, քաջալերանքով և հարգանքով: Դուք ընտրված եք մեր ժողովրդի ազատ կամքով, և հետևաբար արժանավորապես ներկայացնում եք համայն մեր ազգը, նույնիսկ, իմ կարծիքով, իրավունք ունեք դուք ներկայացնելու արտասահմանի մեր հայ ժողովուրդը, որոնց Հայրապետն եմ նաև: Թույլ եմ տալիս ես ինձ այս կարծիքը հայտնելու, որովհետև ծանոթ եմ ես ձեր քույրերին և եղբայրներին, որ բնակվում են արտասահմանում, և գիտեմ, թե նրանք ևս մեր երկրի քաղաքացիների հետ միասին սրտատրոփ հետևում են հայրենի կյանքի ընթացքին, ուրախանում են հաջողություններով, տխրում են դժվարություններով՝ կամ անհաջողություններով կամ անկարգություններով, և վստահ եմ, որ այսօր նրանք ևս սպասում են ձեզանից՝ այս Գերագույն խորհրդից, իսկապես բախտորոշ որոշումներ, իրագործումներ, որպեսզի մեր ժողովուրդը դուրս գա այն դժվարին պայմաններից, որոնց մեջ ենք գտնվում բոլորս: Այլ առիթներով ես արտահայտվել եմ հեռուստացույցով, կոչերով, այսօր իմ բոլոր մտածումները և մաղթանքները և սպասումները ուզում եմ արտահայտել մեկ ամփոփ բանաձևումով, որ ընդունված է մեր Եկեղեցու կյանքում: Այդ է՝ «ազատություն յերկբայականս, միութիւն ի կարևորս և սէր յընդհանուրս»: Այսինքն՝ ազատություն բոլոր այն հարցերում, որոնք դրվում են ձեր առաջ ի քննություն, ազատություն մտածումի և արտահայտության այն բոլոր հարցերում, որոնք քննարկելի են, որոնք կարիք ունեն լուսաբանվելու, որոնք վիճելի են նույնիսկ: Դա մեր Եկեղեցու հին մի բանաձևումներից մեկն է, որ, ինչպես նկատեցիք, լիովին համապատասխանում է մեր օրերի ժողովրդավարական սկզբունքներին: Երկրորդ՝ միություն ի կարևորս: Սա էլ պատմական փորձառության արդյունք է, սիրելի եղբայրներ և քույրեր, որ միանանք հիմնական հարցերի մեջ, որոնք վճռական նշանակություն ունեն մեր ժողովրդի կյանքի ճանապարհը գծելու և ավելի լուսավոր ապագա գտնելու: Ուրեմն բախտորոշ հարցերում պետք է ստեղծվի այդ միությունը, բախտորոշ՝ մեր ազգի գոյատևման, մեր հայրենիքի պաշտպանության և անվտանգության տեսակետից, որովհետև մեր օրերում և նաև գալիք օրերում կարող ենք կանգնել վտանգի առջև: Հետևաբար այդ գիտակցությամբ՝ կարևոր, հիմնական նշանակություն ունեցող հարցերի մեջ պետք է լինի միություն, միասնություն: Եվ երրորդ՝ սեր: Սերը, որ մայրն է բոլոր բարիքների մարդկային կյանքում առհասարակ, նաև հասարակական կյանքում: Այս դեպքում սեր ասելով պետք է հասկանանք հատկապես եղբայրսիրությունը: Մենք բոլորս, դուք բոլորդ մեկ ազգի հարազատ զավակներն ենք, ամեն բանից վեր և անկախ բոլոր տեսակետներից և գաղափարական դիրքորոշումներից: Ի սկզբանե մենք մեկ ազգ ենք և, հետևաբար, նույն ազգի զավակներն ենք, համախմբված Սուրբ Արարատի լանջերի շուրջ հազարավոր տարիներ ի վեր, նախաստեղծման օրերից սկսյալ: Մենք միայն այսօրվա

հայությունը չենք ներկայացնում, այլ համայն ամբողջությունը հայ ժողովրդի, սկզբից մինչև մեր օրերը: Այդ գիտակցությամբ, ուրեմն, մենք բոլորս պետք է զմեզ նկատենք իբրև եղբայրներ, գործակիցներ, ուղեկիցներ փոխադարձ սիրով ու բարի կամեցողությամբ, մեկը մյուսի հանդեպ ներողամտությամբ:

Ահա այսպես ներկայացնում եմ ես ձեզ իմ հայրական, Հայրապետական հորդորը: Ձեզ մաղթում եմ ուժ և եռանդ, կորով, քաջություն, ու նաև երբեմն համբերություն, զգացմունքների ազնվություն: Նաև մաղթանք, որ զգացմունքները ղեկավարվեն բանականության լույսով, որպեսզի ներդաշնակություն ստեղծվի զգացմունքների և մտածումների միջև, և դուք կարողանաք լավագույն հեռանկարները բանալ մեր ժողովրդի կյանքի ծանապարհին, մեր Մայր Հայրենիքի զարգացման հետագա ծանապարհին: Հառաջ ընթացեք լավատեսությամբ, հառաջ ընթացեք ինքնավստահությամբ, հառաջ ընթացեք շրջահայեցությամբ և նաև իրապաշտ հեռատեսությամբ:

Մեր ժողովուրդը, մեր Մայր Երկիրը կանգնած են երկու ծանապարհների առաջ այս տագնապալի պահերին: Եկեք ընտրենք այն ծանապարհը, որ պետք է տանի մեզ դեպի իրագործումը մեր ազգի բոլոր արդար իղձերի, դեպի ավելի լուսավոր ապագա: Այսպես, կարծում եմ, որ մեր հայրենիքը պիտի կարողանա ուղիղ ծանապարհը գտնել ազատ և ինքնիշխան մի կյանքի՝ ամրապնդելով Սովետ Միության ազգությունների միության մեջ:

Եվ վերջացնում եմ իմ խոսքը՝ հրավիրելով ձեզ, որ ուխտ կատարեք նահատակ գրող Դանիել Վարուժանի խոսքերով. «Մենք՝ զավակներդ օգոստափառ, պիտի կերտենք նոր արշալույս». ամեն: